
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

ԹԱԲԱՂՅԱՆ Ս. Վ.

Լեզվի զարգացման ընթացքում հապավումներն ու համառոտագրությունները լայն կիրառություն են ստանում գիտության, կրթության, մշակույթի և այլ բնագավառներում: Բանավոր և գրավոր խոսքում միտքը առավել համառոտ և հստակ արտահայտելու անհրաժեշտությունը առաջ է բերում հնարավորինս կրճատ բառաձևեր ստեղծելու, բառերը համառոտագրելու պահանջ: Տեխնոլոգիական նորամուծությունների շնորհիվ ստեղծվող նորարարությունները, որոնք հարստացնում են որևէ լեզու, լրացվում են միջազգային ճանաչում ստացած, հիմնականում անգլերենից փոխառված տերմիններով: Այդ ամենը տեղ է գտնում պարբերական մամուլում, մասնագիտական գրականության մեջ և բառարաններում: Դրանում, իհարկե, հզոր խթան են գիտատեխնիկական առաջընթացն ու համացանցը: Մասնագիտական գրականության մեջ, բառարաններում և ընդհանրապես գրավոր խոսքում կիրառվող հապավումներն աստիճանաբար ձեռք են բերում սովորական գործածություն:

Տերմինների հապավումը դրսևորվում է որպես առանձնահատուկ բառաբաղադրությունների ոճական հնար և նոր եղանակ, հատկապես XX դարում: Ըստ ակադ. Ջահուկյանի, «Համառոտագրություն-ներով բառեր չեն ստեղծում, մինչդեռ հապավումներով ստեղծվում են առանձնահատուկ տիպի բաղադրյալ բառեր»¹: Նշենք, որ հապավումների համար հիմք են ծառայել համառոտագրությունները: Այսպես, ժամանակին գրել են բառերի առաջին տառերը՝ մեծատառերով և կետերով: Հայերեն գրավոր խոսքում կիրառելի են եղել, օրինակ, Հ.Ա. - Հանդես ամսօրեայ կամ՝ Ն.Դ. - Նոր դար. այս երևույթը նկատելի է նաև այլ լեզուներում, այդ թվում նաև գերմաներենում, ինչպես՝ Z. B- Zum Beispiel (օրինակի համար) u.a.- und andere (և այլն): Մակայն հետագայում այդ նույն համառոտագրությունները սկսեցին գրվել առանց կետերի, որոնք հնում նշանների և ցուցիչների դեր էին կատարում: Եվ հենց այդ կետերի բացթողումներն էլ հանգեցրին համառոտագրությունների նոր եղանակի՝ համառոտագրված բառերի սկզբնատառերի՝ միասին գրվելուն: Այսպիսով, հապավումը դարձավ համառոտագրության յուրատեսակ զարգացման հետևանք:

Հապավումների առաջացումը լեզվում տեղի էր ունենում երկու փուլով: Սկզբնական շրջանում բանավոր և գրավոր խոսքում կրճատվում էին բառերի վերջին մասերը: Օրինակ, Automobil – Auto, die Werbung – die Werbe, die

¹ Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է. Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու, մաս I, պր. Ա, Ե., 1984, էջ 261:

*Univers*Մտ – *die Uni*: Նույն երևույթը առկա է նաև հայոց լեզվում, ինչպես՝
 ավտոմեքենա – ավտո, մետրոպոլիտեն – մետրո: Մակայն հայերենում
 նմանատիպ հապա-վումներն ավելի հաճախ նկատելի են անվանումների մեջ՝
 Արեգնազան – Արեգ, Ոսկեհատ – Ոսկի, Մանուշակ – Մանուշ և այլն:

Նման հապավումները հաճախ են գործածվում պարբերական մա-մուլում,
 գեղարվեստական կամ գիտական գրականության մեջ և քաղաքական-
 տնտեսական բառապաշարում: Ինչպես հայերենում, այնպես էլ
 ժամանակակից գերմաներենում առկա են նաև տառային հապավումները,
 օրինակ, ԱՄՆ-Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ԳՖՀ – Գերմանիայի
 Ֆեդերատիվ Հանրապետություն, ԿԿ – Կոմունիստական կուսակցություն:
 Գերմաներենում՝ BRD – Bundes Republik Deutschland, AG – Aktien Gesellschaft
 (բաժնետիրական ընկերություն), GmbH – Gemeinschaft mit beschränkte
 Haftung – հայերենում՝ ՄՊԸ /սահմանափակ պատասխանատվությամբ
 ընկերություն:

Գերմաներենում բավական շատ են բաղադրյալ բառերը, որոնք ունեն լայն
 գործածություն: Այդ իսկ պատճառով, բաղադրյալ անվանումների
 կրճատված մասերով բառակազմության տեսակը ևս մեծ կիրառություն է
 ձեռք բերել: Այդ կրճատված բաղադրիչները համապատասխանում են
 բաղադրյալ անվանումների բաղադրիչների կրճատված մասերին, վանկերին,
 տառերին:

Հապավումները գերմաներենում ըստ կազմության լինում են՝

I. Վանկային, օրինակ՝ Adj-Adjektiv, Corp-Corporation, Relpron- Relativ
 Pronomen. նույնը հայերենում է, օրինակ՝ քաղղեկ – քաղաքական ղեկավար,
 ուսմասվար-ուսումնական մասի վարիչ, ջրշին – ջրային շինարարություն:
 Նման հապավումների համար հիմք է ծառայում վանկակազմությունը:
 Կիրառական են հիմնականում փակ վանկերը:

II. Տառային, որը կազմված է սկզբնատառերից. օրինակ՝ MEP-
 Mikroelektronikprojekt – միկրոէլեկտրոնային ծրագիր, TSV-technische
 sicherheitsvorschriften – տեխնիկական ապահովագրություն, WA –
 Wirtschaftsabkommen-տնտեսական պայմանագիր, WZ-Warenzeichen –
 ապրանքանիշ, BLZ – Bankleitzahl – բանկային կոդ: Հայերեն օրինակներ՝ բուհ-
 բարձրագույն ուսումնական հաստատություն, ՄԱԿ- Միավորված ազգերի
 կազմակերպություն:

Նշենք, որ տառային հապավումները հայոց լեզվում հասկացուցի
 պաշտոնում կարող են հանդես գալ և՛ թեք (ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար,
 ԱՄՆ-ի կոնգրես), և՛ ուղիղ ձևերով (ԱՄՆ պետ-քարտուղար, ՀՀ դեսպան):
 Գերմաներենում նման հապավումներ հանդիպում ենք հարաբերական
 ածականների կիրառության ժամա-նակ: «Mutterliche Liebe» – ի փոխարեն՝
 Muttersliebe (մայրական սեր) Vaterliches Haus – Vatershaus (հայրական տուն),
 Schuliche Bank – Schulbank (դպրոցական նստարան): Ասենք, որ հայերենում,
 ինքնուրույն բառի վերածված տառային հապավումների

վերջավորությունները գրվում են առանց գծիկի՝ միասին, օրինակ՝ բուհի, զագսի, հէկի²:

III. Խառը կամ վանկատառային, որոնք կազմված են վանկերից, տառերից և լրիվ բառերից: Օրինակ՝ *Vollm – Vollmacht* (լիիշխանություն), *u.andere* և *այլն*), *Soz. Versicherung* - սոցիալական ապահովագրություն: Նույն երևույթը առկա է նաև հայերենում, ինչպես՝ ջրեկ-ջրային էլեկտրակայան, Հայրուսզագարդ:

Քանի որ նորաբանությունների փոփոխությունները, ինչպես նաև դրանց համապատասխան համառոտագրությունները լայն կիրառություն ունեն լեզուներում, հարկ է ուշադրություն դարձնել դրանց ճիշտ թարգմանությանը: Այս հարցում, իհարկե, անփոխարինելի են մասնագիտական, հատկապես հապավումների բառարանները, որոնց թիվն այնքան էլ շատ չէ: Գերմաներեն - ռուսերեն ստվարածավալ բառարաններում հապավումները հատուկ կազմով զետեղված են առանձին հատորով, որոնք էլ լրացնում են այդ բառարանների պակասը³: Այն հապավումները, որոնք չեն եղել բոլոր գործող բառարաններում, տեղ են գտել մասնավորապես հապավումների և համառոտագրությունների գերմաներեն բառարաններում⁴: Նշենք, որ որոշ բառարաններում դրանք ներկայացվում են այբբենական կարգով, մյուսներում՝ առանձին՝ հապավումների համար նախատեսված բաժնով:

Հայերենում այսօր էլ կիրառվում են հապավումներ, որոնք արտահայտելով պատմական - ժամանակագրական իրադարձություններն ու տվյալ ժամանակահատվածին բնորոշ իրողությունները, չեն թարգմանվում, օրինակ, գերմաներենից՝ էսեսական (*SS*), իտալերենից՝ ջեռուցման համակարգ (*BAXI* - ստեղծողի՝ Ռ. Բաքսենդալեի անվան հապավումը), անգլերենից՝ ինքնակենսագրություն (*CV*) և այլն:

Այսպիսով, հապավումները լեզվի զարգացման ընթացքում անընդհատ ավելանում են՝ ձեռք բերելով լայն կիրառություն:

² *Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, կազմող և խմբագիր Բաքսենդալեի Ն. Ի., Ե., 1984, էջ 264:*

³ *Архипов Ф. А. Самоучитель перевода с немецкого языка на русский, М., 1991, с.27.*

⁴ *Նույն տեղում, էջ 28:*

ИСПОЛЬЗОВАНИЕ АББРЕВИАТУР В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ**ТАБАГЯН С. В.**

Резюме

Аббревиатуры широко используются в научной терминологии. При переводе с одного языка на другой, в частности, с армянского языка на немецкий или с немецкого на армянский важное значение имеет передача их точного смысла. Следует также уделять особое внимание вопросам правописания аббревиатур, учитывая их языковые и лексические особенности.

THE USE OF ABBREVIATIONS IN GERMAN**S. TABAGYAN**

Abstract

The present paper studies the proper use of abbreviations in translations. The author compares German abbreviations and their Armenian equivalents. A special emphasis is placed on the spelling of abbreviations, considering their language and lexical peculiarities.